



Վահրամ  
Տեր-  
Մաթևոսյան  
100-  
ամյակի  
միջոցառումների  
մի  
դրվագի  
մասին...

Հասարակություն | Մար. 13, 2015 12:24

1337 դիտում

# Ցեղասպանության 100- րդ տարելիցին նվիրված միջոցառումներ՝ ԵՊՀ- ում





Երեւանի աեւտանան համալսարան

Երեւան: Մեդիամաքս: Երեւանի պետական համալսարանը  
Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված մի  
քանի տասնյակ միջոցառում է կազմակերպում:

Միջոցառումների նախապատրաստական աշխատանքները  
համակարգող հանձնաժողովի նախագահի տեղակալ, ԵՊՀ

փոխտնօրեն Մհեր Հովհաննիսյանն այսօր լրագրողների հետ հանդիպմանը հայտնել է, որ կազմակերպվելու են մեկ տասնյակ գիտաժողովներ, (այդ թվում երեքը՝ միջազգային), բաց դասեր, մրցույթներ, ցուցադրություններ:

«Երախտիքի ծառուղի է բացվելու, որտեղ կտեղադրվեն Ցեղասպանության հարցում իրենց նպաստը բերած 12 օտարազգի գործիչների կիսանդրիները: Գրադարանում բացվելու է Ցեղասպանության վերաբերյալ հայկական եւ արտասահմանյան գրականությամբ համալրված ընթերցասրահ: 25 հետազոտական աշխատանք է հրապարակվելու, որոնցում մեծ թիվ կկազմեն օտարալեզու աշխատությունները», - ասել է Մհեր Հովհաննիսյանը: